

ԶԱՎԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

*Բանկային գործունեության կազմակերպում,
մագիստրատուրա, 2-րդ կուրս*

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. *բանկային համակարգ, դրամավարկային քաղաքականություն, ֆինանսավարկական ճգնաժամ*

Սույն հոդվածում ուսումնասիրվել են ՀՀ բանկային համակարգը, դրա առջև ծառացած խնդիրները, ինչպես նաև լուծման հնարավորություններն ու զարգացման միտումները: Հոդվածի շրջանակում անդրադարձ է կատարվել վերջին երեք տասնամյակների ընթացքում ՀՀ բանկային համակարգի զարգացման շարժընթացին և բացահայտվել են կայուն զարգացումը խթանող գործոնները: Հոդվածում հիմնական շեշտադրումները կատարվել են հատկապես 2007–2009 թթ. համաշխարհային ֆինանսավարկական ճգնաժամի և 2020–2021 թթ. COVID-19 համավարակով պայմանավորված խնդիրների վրա:

Ուսումնասիրության նպատակը արդի աշխարհաքաղաքական և տնտեսական պայմաններում ՀՀ բանկային համակարգի առջև ծառացած խնդիրների վերլուծությունն ու նոր մարտահրավերների դեմ պայքարի համար արդյունավետ մեխանիզմների մշակումն է:

Ներածություն: Վերջին մեկ դարի ընթացքում աշխարհի զարգացած ու զարգացող երկրների բանկային համակարգերը բախվել են բազմաթիվ խնդիրների: Անմասն չի մնացել նաև Հայաստանի երրորդ Հանրապետությունը, որի անկախ պետականության վերականգնումն ընթանում էր Արցախյան առաջին պատերազմի, հետպատերազմյան ճգնաժամի և Սպիտակի ավերիչ երկրաշարժի (մինչ օրս լիարժեք չվերացված հետևանքների) պայմաններում:

ՀՀ բանկային համակարգն իր երեք տասնամյա գործունեության ընթացքում ծանր հարված է ստացել ինչպես 2007–2009 թթ., այնպես էլ COVID-19 համավարակով հարուցված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամների պատճառով: Այս ճգնաժամերն ու դրանց հետ փոխկապակցված խնդիրները ստիպել են ՀՀ Կառավարությանն ու ՀՀ կենտրոնական բանկին վերանայել հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները՝ հաշվի առնելով արդի խնդիրների դրսևորման բնույթը և դրանց դեմ պայքարի մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտությունը:

Հոդվածի նպատակը արդի աշխարհաքաղաքական և տնտեսական մարտահրավերների պայմաններում ՀՀ բանկային համակարգի զարգացման միտումների և հնարավորությունների ուսումնասիրումն է:

Գրականության ակնարկ: Հոդվածի ուսումնասիրման համար տեղեկությունների կարևոր աղբյուր են հանդիսացել ինչպես հայ, այնպես էլ օտարերկրյա տնտեսագետների աշխատություններն ու գիտական հոդվածները, ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակային տվյալները: Արժեքավոր տեղեկություններ են տրամադրել Ս. Դուլլինը, Դ.

Կոտտեն, Ա. Մարկետը¹, ովքեր իրենց կատարած հետազոտությունում հանգամանորեն ներկայացրել են 2008–2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի դրսևորումն ու հետևանքները, տնտեսության և բանկային համակարգի վրա դրա ունեցած բացասական ներգործությունը, ինչպես նաև այդ ժամանակահատվածում աշխարհի տարբեր պետությունների կենտրոնական բանկերի կողմից համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքների դեմ իրականացվող միջոցառումները:

Ըստ Ս. Միթրայի, Դ. Էնդրյուի, Գ. Գյուլումյանի² և մյուսների հետազոտությունների՝ Հայաստանի տնտեսությունում «տնտեսական վագրի» հայտնվելը պայմանավորված է մակրոտնտեսական կայուն միջավայրի ձևավորման և տնտեսությունում բարեփոխումների իրականացման վճռականությամբ, բարեփոխումներ, որոնք 2000-ականների սկզբներին ուղղված են եղել երկրում շուկայական տնտեսության ձևավորմանն ու աշխարհի հետ ինտեգրմանը:

Վ. Կուզնեցովան և Օ. Լարինան³ իրենց հետազոտությունում եկել են այն եզրակացության, որ 2007 թվականից ծայր առած և մինչև 2009 թ. տևած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից մինչև 2020–2021 թթ. COVID-19 համավարակով պայմանավորված տնտեսական ճգնաժամի շրջանը աշխարհի զարգացած ու զարգացող շատ պետությունների կենտրոնական բանկեր (նաև՝ Հայաստանի) սկսեցին ակտիվորեն ընդլայնել իրենց գործիքակազմն ու գործառույթները (այդ թվում՝ իրենց հաշվեկշռային ակտիվների և պասիվների): Միաժամանակ, հեղինակները նշում են, որ այս փաստերը չպետք շտապողաբար մեկնաբանել, քանի որ դրանց հետևանքները պետք է գնահատել երկարաժամկետ կտրվածքով տնտեսության ակտիվության և գնաճի վրա հետագա ազդեցության տեսանկյունից: Ըստ հեղինակների՝ նշված ժամանակահատվածում կենտրոնական բանկերի գործառույթների և գործիքակազմերի կրած փոփոխություններն ու կատարելագործումն էվոլյուցիոն նշանակություն ունեն և ժամանակի ընթացքում կհամապատասխանեցվեն պետության տնտեսական զարգացման շարժընթացին:

Մեթոդաբանություն: Թեմայի շրջանակում անհրաժեշտ տեղեկությունների հավաքման և վերլուծման համար կիրառվել են տնտեսագիտական հետազոտության էմպիրիկ (դիտման, չափման, համեմատման), ինչպես նաև վիճակագրական տվյալների հավաքման և վերլուծության մեթոդները, որոնց միջոցով ամբողջացված տեղեկությունները համապատասխան վերլուծության են ենթարկվել:

Հոդվածում առանձնապես կարևոր նշանակություն են ունեցել Վ. Կուզնեցովի և Օ. Լարինայի դիտարկումները: Ըստ հեղինակների՝ 2007–2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի շրջանում կարևոր ուշադրություն է դարձվել հատկապես ֆինանսների ոլորտը համակարգող գերատեսչությունների փոխգործակցության մեխանիզմներին, թիզնեսի ֆի-

¹ St' u Dullien S., Kotte D., Márquez A., Priewe J., The Financial and economic crisis of 2008–2009 and developing countri, New York and Geneva, December 2010:

² St' u Mitra S., Andrew D., Gyulumyan G., Holden P., Kaminski B., Kuznetsov Y., The Caucasian Tiger: Sustaining Economic Growth in Armenia, Washington, D.C., 2007:

³ St' u Кузнецова В., Ларина О., Эволюция роли национальных центральных банков, Финансы: теория и практика, Том 26, № 2, 2022:

նանսավորման նոր աղբյուրներին, ինչպես նաև տնային տնտեսությունների աջակցությանը: Համամիտ ենք, քանի որ նշված ժամանակահատվածում աշխարհի տարբեր պետություններ գնաճն ու տնտեսական անկայունությունը փորձում էին լուծել կառավարության, համապատասխան գերատեսչության և կենտրոնական բանկի մակարդակով տարբեր ոլորտներին ուղղված աջակցության ծրագրերով:

Հոդվածում վիճակագրական վերլուծության մեթոդի միջոցով հավաքագրվել, մշակվել և ուսումնասիրվել են ՀՀ տնտեսական (ՀՆԱ) և բանկային համակարգի վիճակագրական ցուցանիշները, ինչը հնարավորություն է ընձեռել ավելի հստակ պատկերացում կազմելու վերջին երկու տասնամյակի ընթացքում ՀՀ բանկային համակարգի կրած փոփոխությունների վերաբերյալ:

Վերլուծություն: 1991 թ. Խորհրդային Միության փլուզումից և անկախության վերականգնումից հետո մեր պետությունը երբեք չի ունեցել կայուն զարգացման շրջան: Անկախությանը հաջորդած երեք տասնամյակների ընթացքում ՀՀ տնտեսությունը, այդ թվում՝ բանկային համակարգը, զարգացել է չափավոր շարժընթացով, որը դժվար է դրական անվանել: Սպիտակի ավերիչ երկրաշարժը (1988 թ.), ադրբեջանահայության ջարդերն ու Արցախյան առաջին պատերազմը (1988–1994 թթ.), հետպատերազմյան սոցիալ-տնտեսական ճգնաժամն ու միգրացիան ծանր հարված հասցրին ՀՀ տնտեսությանը: Խիստ տուժեց նաև բանկային համակարգը:

Ստեղծված իրավիճակի շտկման առաքելությունը ստանձնեցին ՀՀ Կառավարությունը և ՀՀ ԿԲ-ն, որոնց կողմից հետագա տարիներին իրականացվող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները նպաստեցին բանկային համակարգի գործունեության էական կայունացմանը:

Իրավիճակն զգալիորեն բարելավվեց 1998–2008 թթ. ժամանակահատվածում: Սա հետպատերազմյան և համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի միջանկյալ հատվածն էր, որի ընթացքում ՀՀ տնտեսությունը, այդ թվում՝ բանկային համակարգը, զարգացան հարաճուն տեմպերով: Հարկ է նշել, որ հենց այս ժամանակահատվածում ՀՀ ՀՆԱ-ն գրանցեց երկնիշ տնտեսական աճ, որը երկար ժամանակ Հարավային Կովկասի երեք հանրապետությունների մեջ լավագույն ցուցանիշն էր համարվում (գծապատկեր 1)¹:



Գծապատկեր 1. ՀՀ ՀՆԱ աճի տեմպը 1998–2008 թթ. (%), «Կովկասյան վագր»

¹ Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջ, «Համախառն ներքին արդյունք, շուկայական գներով (1998–2008 թթ.)», <https://armstat.am/am/?nid=12&id=01001> (բացված՝ 12.12.2022):

Գծապատկեր 1-ից ակնհայտ է, որ 1998–2008 թթ. ժամանակահատվածում ՀՀ ՀՆԱ աճի տեմպը, բացառությամբ 1999–2000 և 2008 թվականների, եղել է 7% շեմից բարձր: Աճի շարժընթացն առավել ցայտուն արտահայտվել է հատկապես 2000–2003 թթ. ժամանակահատվածում՝ 5,9% աճից հասնելով 14% աճի: Հենց այս բարձր ցուցանիշի համար Հայաստանը որակվեց «Կովկասյան վագր»¹: Եվ թեպետ 2004-ին արձանագրվել էր անկում՝ հասնելով 10,5%-ի, սակայն հետագա երեք տարիների ընթացքում (2005–2007 թթ.) այդ ցուցանիշը տատանվում էր 13%-ի սահմաններում:

ՀՀ տնտեսությանն ու ֆինանսական համակարգին ոչ պակաս ծանր հարված հասցրեց 2007–2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը², որի ծանր բեռն ու հետևանքները ՀՀ ֆինանսական համակարգը զգաց հատկապես հետճգնաժամային շրջանում: Այնուամենայնիվ, 2010-ական թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ Կառավարության կողմից իրականացված ֆինանսատնտեսական քաղաքականությունը որոշ չափով մեղմեց ճգնաժամային իրավիճակում հայտնված հանրապետության դրությունը: Դրան նպաստեցին նոր ներդրումների ներգրավումը, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետության բարձրացումը:

2007–2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի զարգացումն ի ցույց դրեց մի շարք տնտեսապես առաջատար պետությունների կենտրոնական բանկերի կողմից դրա դիմագրավման անկարողությունն ու անարդյունավետությունը: Այդ շրջանում տարբեր երկրների կենտրոնական բանկեր ձեռնարկեցին տարատեսակ համալիր միջոցառումներ, որոնց արդյունքում ձևավորվեց այսպես կոչված «ոչ ավանդական» դրամավարկային քաղաքականությունը³:

2008–2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամը փոշիացրեց «Կովկասյան վագրի» իրական ներուժն ու կենսունակությունը: Մասնավոր տրանսֆերտների կտրուկ նվազումը և շինարարության շուրջ 40% անկումը 2009 թ. պայմանավորեցին երկրի ՀՆԱ 14,1% «փլուզումը»: Եվ այս բացասական ցուցանիշն աննախադեպ էր ոչ միայն հետխորհրդային տարածաշրջանում, այլև ամենաբարձր անկումներից մեկն էր աշխարհում:

2008 թ. տեղի ունեցավ կտրուկ անկում, որն ավելի վառ արտացոլվեց 2009-ին, երբ ՀՆԱ-ն, նախորդ տարվա համեմատ, ունեցել էր 14,1% անկում: Այլ կերպ ասած՝ սա 2003 թ. հայելային, սակայն բացասական ցուցանիշն էր, որն անմիջականորեն բացասաբար անդրադարձավ նաև ՀՀ բանկային համակարգի վրա: Եվ թեպետ ՀՆԱ-ն գրանցեց 2,2% աճ, սակայն այն այդպես էլ չգերազանցեց 2001 թ. 9,6% աճի ցուցանիշը՝ հետևաբար նաև չգրանցելով երկնիշ աճ:

2009–2019 թթ. ժամանակահատվածում ՀՀ ՀՆԱ-ի պատկերն ունեցել է անկայուն շարժընթաց՝ տատանվելով 3–7%-ի շեմում (գծապատկեր 2):

¹ St' u Mitra S., Andrew D., Gyulumyan G., Holden P., Kaminski B., Kuznetsov Y., The Caucasian Tiger: Sustaining Economic Growth in Armenia, Washington, D.C., 2007:

² St' u Dullien S., Kotte D., Márquez A., Priewe J., The Financial and economic crisis of 2008–2009 and developing countries, New York and Geneva, December 2010:

³ St' u BIS, Central banking in challenging times. Claudio Borio, <https://www.bis.org/speeches/sp191108a.htm> (բացված՝ 12.12.2022)

Գծապատկեր 2-ից երևում է, որ նախքան ՀՀ-ում COVID-19 համավարակի տարածումը, հանրապետության ՀՆԱ-ն ուներ անկայուն աճ, որը մերթ-ընդմերթ ընդհատվում էր որոշակի անկումով: 2019 թ. ամերիկյան Time շաբաթաթերթի տարեվերջյան համարում Հայաստանի տնտեսական վիճակի վերաբերյալ հրապարակվել էր հոդված՝ «Հայաստան. Կովկասյան վագր» վերտառությամբ: Սակայն, իրավիճակը 2020 թ. սկզբին կտրուկ փոխվեց աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում՝ կորոնավիրուսի համավարակի հետևանքով, որը հարուցեց բոլորովին նոր և առավել ծանր բնույթի ֆինանսատնտեսական ճգնաժամ:



Գծապատկեր 2. ՀՀ ՀՆԱ աճի տեմպը 2009–2019 թթ. (%)¹

Տարբեր երկրներում կառավարությունները, կենտրոնական բանկերի հետ միասին, ճգնաժամի սկզբնական շրջանում ձեռնարկեցին տարատեսակ միջոցառումներ. որոշ երկրներ՝ խթանիչ գործողություններ, իսկ կենտրոնական բանկերը շատ հաճախ խոչընդոտում էին տնտեսավարող սուբյեկտների զարգացմանը՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացման միջոցով:

Ազգային ֆինանսական համակարգում կենտրոնական բանկերի կողմից անհրաժեշտ մակարդակով ցուցաբերած աջակցությունից բացի, առանձնակի ուշադրություն էր դարձվում հատկապես ֆինանսների ոլորտը համակարգող գերատեսչությունների փոխգործակցության մեխանիզմներին, բիզնեսի ֆինանսավորման նոր աղբյուրներին, ինչպես նաև տնային տնտեսությունների աջակցությանը: Հիշյալ ժամանակաշրջանում շատ երկրների կենտրոնական բանկեր հետապնդում էին առավելապես մեկ նպատակ՝ ինֆլյացիայի կրճատումը²:

2008–2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին հաջորդած ժամանակահատվածում ՀՀ ֆինանսական համակարգի, այդ թվում՝ բանկային ոլորտի գործունեությունն էապես բարելավվեց: Դա ակնհայտ է նաև ՀՀ բանկային համակարգի հաջորդ տարիներին գրանցած հիմնական ցուցանիշներում, որոնք արտացոլված են աղյուսակ 1-ում:

¹ Գծապատկեր 2-ը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՀՀ վիճակագրական կոմիտեի 2009–2019 թթ. ՀՀ ՀՆԱ աճի տեմպի տվյալները:

² St' u Кузнецова В., Ларина О., Эволюция роли национальных центральных банков, Финансы: теория и практика, Том 26, № 2, 2022, էջ 65:

Աղյուսակ 1
ՀՀ բանկային համակարգի հիմնական ցուցանիշները 2009–2019 թթ.¹
(մլն ՀՀ դրամ)


Տարի	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Ակտիվներ, ընդամենը	1325	1560	2066	2470	2943	3410	3449	3994	4364	4986	5828
Ընդամենը պարտավոր. և սեփ. կապիտալ, այդ թվում՝	1325	1560	2066	2470	2943	3410	3449	3994	4364	4986	5828
պարտավոր., ընդամենը	1047	1241	1710	2077	2487	2942	3340	3678	3678	4237	5004
Կապիտալ, ընդամենը, այդ թվում՝	278	318	355	393	455	468	506	653	686	748	824
կանոնադրական հիմնադրամ	188	203	233	244	263	290	356	458	463	505	525
գլխավոր պահուստ	8	15	18	20	22	27	30	31	33	45	53
առևտրային բանկերի ընդհանուր շահույթ (վնաս(-))	64	81	85	108	136	129	101	119	134	147	190
կապիտալի այլ տարրեր	16	18	17	20	33	22	17	44	54	50	54

Աղյուսակ 1-ից երևում է, որ ֆինանսատնտեսական ճգնաժամին հաջորդած առաջին տասնամյակի ընթացքում ՀՀ բանկային համակարգի հիմնական ցուցանիշները, մասնավորապես ընդհանուր ակտիվների մասով, ունեցել են կայուն աճ: 2020 թ. այդ ցուցանիշը կազմել է 6.691 մլն ՀՀ դրամ, իսկ 2021 թ՝ 7.085 մլն ՀՀ դրամ²: Ինչպես տեսնում ենք, 2020 թ. COVID-19-ով պայմանավորված նոր տնտեսական ցնցումն էապես ծանր չի անդրադարձել ՀՀ բանկային համակարգի ակտիվների շարժընթացի վրա: Աննախադեպ էին նաև 2022 թ. երեք եռամսյակների ցուցանիշները. բանկային համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացան 11.9%-ով, պարտավորությունները՝ 9.1%-ով, կապիտալը՝ 30%-ով³:

¹ Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջ, Դրամավարկային միջնորդության համակարգի հիմնական ցուցանիշներ, https://armstat.am/file/article/finansner_2015_3.pdf, https://armstat.am/file/article/finansner_2022_3.pdf (բացված՝ 15.01.2023):

² Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջ, Դրամավարկային միջնորդության համակարգի հիմնական ցուցանիշներ 2017–2021, https://armstat.am/file/article/finansner_2022_3.pdf (բացված՝ 15.01.2023):

³ Տե՛ս Banks.am, ՀՀ բանկային համակարգի կապիտալը երրորդ եռամսյակում ավելացել է 30%-ով, <https://banks.am/am/news/interviews/24736> (28.10.2022): ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջ, Համախառն ներքին արդյունք, շուկայական գներով (2019–2022 թթ.), <https://armstat.am/am/?nid=12&id=01001> (բացված՝ 12.01.2023):



Գծապատկեր 3. ՀՀ բանկային համակարգի ակտիվների աճի շարժընթացը 2009–2022 թթ.¹

Գծապատկեր 3-ից երևում է, որ 2009–2022 թթ. ժամանակահատվածում ՀՀ բանկային համակարգի հիմնական ցուցանիշներում անկումային են եղել 2009, 2013, 2015, 2016, 2018 և 2020 թվականները:

Վերջին տարիներին բավականին լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել նաև ՀՀ առևտրային բանկերի եկամուտների և ծախսերի մասով: Խոսքը վերաբերում է 2018–2022 թվականներին, որոնք արտացոլված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

ՀՀ առևտրային բանկերի եկամուտներն ու ծախսերը 2018–2022 թթ.²
(մլն ՀՀ դրամ)

Տարի	2018	2019	2020	2021	2022
Տոկոսային եկամուտներ	351 416	394 746	454 990	490 089	566 936
Տոկոսային ծախսեր	201 427	223 575	249 592	280 516	310 912
Զուտ տոկոսային եկամուտներ	149 989	171 170	205 399	209 572	256 023
Ոչ տոկոսային եկամուտներ	116 558	143 211	154 476	159 255	455 798
Ոչ տոկոսային ծախսեր	156 127	164 794	165 085	190 204	256 023
Զուտ ոչ տոկոսային եկամուտներ	-39 569	-21 582	-10 609	-30 948	-14 682
Շահույթը մինչև հարկվելը	55 063	80 448	78 218	76 773	–
Շահութահարկ	16 476	18 234	15 519	13 941	–
Զուտ շահույթ	38 587	62 213	62 699	62 832	256 219
Զբաղիված շահույթ	38 354	61 292	61 645	61 780	–

2013–2014 թթ. ուկրաինական ճգնաժամը, Ղրիմի հանրաքվեն և թերակղզու՝ Ռուսաստանի Դաշնության կազմում ինտեգրումը բացասաբար ազդեցին նաև մեր տարածաշրջանի փխրուն կայունության վրա: Արևմուտքի երկրների կողմից ՌԴ-ի նկատմամբ կիրառած տնտեսական պատժամիջոցներն անուղղակի կերպով անդրադարձան նաև ՀՀ տնտեսության և հատկա-

¹ Գծապատկեր 3-ը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՀՀ վիճակագրական կոմիտեի 2009–2022 թթ. ՀՀ բանկային համակարգի ակտիվների տվյալները:

² Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջ, Դրամավարկային միջնորդության համակարգի հիմնական ցուցանիշներ 2017–2021 թթ., https://armstat.am/file/article/finansner_2022_3.pdf (բացված՝ 12.01.2023):

պես՝ բանկային համակարգի վրա: Ուկրաինական ճգնաժամի և հակառուսական պատժամիջոցների անուղղակի հարվածի տակ հայտնված ՀՀ բանկային համակարգն արդեն 2017 թ. դրությամբ լքեցին չորս բանկեր (Առէկսիմբանկ, ԲՏԱ Բանկ, Գազպրոմբանկ և Պրոկրեդիտ բանկ), ինչի հետևանքով ՀՀ բանկերի թիվը 21-ից նվազեց 17-ի:

ՀՀ բանկային համակարգն արմատական փոփոխությունների ենթարկվեց հատկապես վերջին երկու տարիների ընթացքում տեղի ունեցած ներքին և արտաքին քաղաքական, տնտեսական զարգացումների պատճառով (2020 թ. մարտ-մայիս ամիսներին COVID-19-ով պայմանավորված կարանտինային ռեժիմի սահմանում, հուլիսին՝ Տավուշյան մարտեր, 2020 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին՝ Արցախյան երկրորդ պատերազմ, 2021–2022 թթ.՝ սահմանամերձ ռազմական բախումներ Ադրբեջանի հետ, 2022 թ. փետրվարի վերջից՝ ռուս-ուկրաինական պատերազմի սկիզբ և այլն):

ՀՀ բանկային համակարգի վրա բացասաբար չէր կարող չանդրադառնալ նաև 2022 թ. փետրվարի վերջից ՌԴ ԶՈւ-ի կողմից Ուկրաինայի տարածքում իրականացված «հատուկ ռազմական գործողությունը»: Ուկրաինայի տարածք ռուսական ռազմական ներխուժմանը հավաքական Արևմուտքը և նրա դաշնակից երկրները պատասխանեցին տարաբնույթ պատժամիջոցներով, որոնք ոչ միայն հարվածեցին Ռուսաստանի, այլև վերջիններիս դաշնակից և բարեկամ երկրների, այդ թվում՝ Հայաստանի տնտեսությանը: Արդեն մարտ ամսվա վերջին ՀՀ բանկային խնայողությունները նվազեցին 68 մլրդ ՀՀ դրամով (մոտ 130–135 մլն ԱՄՆ դոլարով): Բնակչության ավանդները կրճատվեցին ավելի քան 34 մլրդ ՀՀ դրամով (մոտ 65–70 մլն ԱՄՆ դոլարով): Մարտին, փետրվարի նկատմամբ, ֆիզիկական ու իրավաբանական անձանց ավանդները կրճատվեցին 22 մլրդ ՀՀ դրամով: Բնակչության բանկային խնայողությունները, որոնք հասնում էին 3,7–3,8 մլրդ ԱՄՆ դոլարի, տարեսկզբի 3 ամիսների ընթացքում նվազեցին: Հատկապես նվազեցին դրամով պահվող խնայողությունները¹:

Չնայած միջազգային կայունության վրա ռուս-ուկրաինական պատերազմի բացասական հետևանքներին, որոնցից զերծ չի մնացել նաև Հայաստանը, այնուամենայնիվ, ՀՀ տնտեսությունը և բանկային համակարգը որոշ ցուցանիշներում արձանագրել են դրական միտումներ: 2022 թ. ընթացքում ՀՀ բանկերի ընդհանուր զուտ շահույթը կազմել է 263 մլրդ ՀՀ դրամ, ինչը 197 միլիարդով (կամ 4 անգամ) ավելի է, քան նախորդ տարվա գրանցած ցուցանիշը: 2022 թ. ընթացքում բանկային համակարգի սեփական կապիտալն աճել է 40%-ով՝ տարեվերջին (2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ) կազմելով 1.316 մլրդ ՀՀ դրամ: 2022 թ. 1.338 մլրդ ՀՀ դրամի (կամ 19%) աճ է արձանագրվել նաև բանկային համակարգի ընդհանուր ակտիվների ցուցանիշում, որն արդեն տարեվերջին կազմել է 8.409 մլրդ ՀՀ դրամ: Նույն թվականին 964 մլրդ ՀՀ դրամի (կամ 16%) աճ է արձանագրվել նաև բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններում՝ տարեվերջին կազմելով 7.093 մլրդ ՀՀ դրամ²:

¹ St' u Rumels Management Solutions, Հայաստանի բանկային համակարգի ֆինանսական վերլուծություն, 2022 թ., https://rumels.am/publications_am.php?x=13 (բացված՝ 12.01.2023):

² St' u նույն տեղը:

2022 թ. հունիսի 13-ին ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նիստում կայացած քննարկումների արդյունքում արձանագրվեց, որ մայիս ամսվա դրությամբ ՀՀ-ում գնաճը կազմել է 9%: ՀՀ ԿԲ-ում համոզված են, որ եթե իրենց կողմից միջամտություն կատարվի փոխարժեքի շուկա մուտք գործելու՝ դրամն արհեստականորեն արժեզրկելով, ապա նման գործելակերպի հետևանքով ՀՀ-ն կբախվի գնաճի նոր և հավանաբար ավելի ծանր ալիքի հետ, որն իր բացասական ազդեցությունը կունենա նաև բանկային համակարգի կայունության վրա: ՀՀ ԿԲ նախագահի 2022 թ. տարեվերջյան ամփոփիչ խոսքից ակնհայտ դարձավ նաև, որ 2023 թ. առաջին եռամսյակում կանխատեսվում է բարձր գնաճային սցենար և գնաճի արագացում, որը հետևողականորեն վերահսկվելու է ԿԲ-ի կողմից և համապատասխան միջոցներով հնարավորինս կայունացվելու:

Եզրակացություն: Արդի շրջանում ՀՀ տնտեսությունը և բանկային համակարգը կանգնած են նոր մարտահրավերների առջև: 2020 թ. ընթացքում աղետաբեր համավարակի և պատերազմի հետևանքները անգամ երեք տարի անց լիարժեք չեն վերացվել, իսկ նոր համավարակի ալիքի կամ պատերազմի սպառնալիքը շարունակում է պահպանվել: Մի կողմից՝ աշխարհում տեղի ունեցող գործընթացները բացասական հետևանքներ են ունենում երկրի բանկային համակարգի վրա, մյուս կողմից՝ դրանք նոր հնարավորություններ են ստեղծում:

Այսօր բավականին քննարկվող թեմաներից է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցը, որում վերջին երկու տարիների ընթացքում ակտիվ դիվանագիտական քայլեր են ձեռնարկվում: Տնտեսագետներն ու փորձագետները տարբեր կերպ են գնահատում Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը, հայ-թուրքական պետական սահմանի բացումն ու առևտրատնտեսական կապերի զարգացումը: Ոմանք պնդում են, որ այն նոր ֆինանսական ներդրումների հնարավորություն կտա, իսկ ոմանք էլ համոզված են, որ այս կերպ ՀՀ տնտեսական ոլորտը և բանկային համակարգը աստիճանաբար կհայտնվեն Թուրքիայի ազդեցության ներքո, ինչպես եղավ Վրաստանում՝ վերջին երկու տասնամյակի ընթացքում:

Իհարկե, այս ամենը դեռևս ենթադրություններ կարելի է համարել, սակայն առավել իրատեսական է ներկայումս ռուս-ուկրաինական պատերազմի ավարտը և Ռուսաստանի նկատմամբ մինչ այդ կիրառված պատժամիջոցների կամ դրանց մի մասի չեղարկումը, ինչը կլուծի ՀՀ բանկային համակարգի առջև ծառացած այն խնդիրները, որոնք անուղղակի կերպով կապված էին այդ պատերազմի և պատժամիջոցների հետ: Ռուս-ուկրաինական հակամարտության ավարտը, կողմերի միջև կառուցողական բանակցությունները և խաղաղության պայմանագրի կնքումը հնարավորություն կտան էապես թոթափելու Ռուսաստանին ուղղված միջազգային պատժամիջոցները: Թեև բոլոր պատժամիջոցները չեն հանվի, սակայն դրանց մի մասի չեղարկումն անուղղակի կերպով դրականորեն կանդրադառնա նաև ՀՀ տնտեսության և բանկային համակարգի գործունեության վրա:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ ԱՎԿ պաշտոնական կայքէջ, <https://www.armstat.am/am/>
2. Banks.am, ՀՀ բանկային համակարգի կապիտալը երրորդ եռամսյակում ավելացել է 30%-ով, <https://banks.am/am/news/interviews/24736> (28. 10. 2022):
3. BIS, Central banking in challenging times. Claudio Borio, <https://www.bis.org/speeches/sp191108a.htm> (բացված՝ 12. 12. 2022).
4. Dullien S., Kotte D., Márquez A., Priewe J., The Financial and economic crisis of 2008-2009 and developing countries, New York and Geneva, December 2010, 324 p.
5. Mitra S., Andrew D., Gyulumyan G., Holden P., Kaminski B., Kuznetsov Y., The Caucasian Tiger: Sustaining Economic Growth in Armenia, Washington, D.C., 2007, 610 p.
6. Кузнецова В., Ларина О., Эволюция роли национальных центральных банков // Финансы: теория и практика, Том 26, № 2, 2022.

ЗАВЕН МАРГАРЯН

*Организация банковской деятельности,
магистратура, 2-й курс*

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ РА В СОВРЕМЕННЫХ ГЕОПОЛИТИЧЕСКИХ И ЭКОНОМИЧЕСКИХ УСЛОВИЯХ

Ключевые слова: *банковская система, денежно-кредитная политика, финансово-экономический кризис*

В данной статье рассматривается банковская система РА, стоящие перед ней проблемы, а также возможности их решения и тенденции развития. В рамках исследования рассмотрена динамика развития банковской системы Республики Армения за последние три десятилетия и выявлены факторы, нарушающие устойчивое развитие. В статье основной акцент был сделан именно на проблемах, связанных с мировым финансово-экономическим кризисом 2007-2009 гг. и пандемией COVID-19 2020-2021 гг.

Целью исследования статьи является изучение проблем, с которыми сталкивается банковская система РА в текущих геополитических и экономических условиях, и разработка эффективных механизмов борьбы с новыми вызовами. Для сбора и анализа необходимой информации в рамках изучаемой темы использовались эмпирические (наблюдение, измерение, сравнение) и статистические методы сбора и анализа данных экономических исследований, посредством которых собранная информация подвергалась соответствующему анализу.

ZAVEN MARGARYAN*2nd year Master, Department of Banking and Insurance***TRENDS IN THE DEVELOPMENT OF THE BANKING SYSTEM OF THE RA IN THE CURRENT WORLD POLITICAL AND ECONOMIC CONDITIONS****Keywords:** *banking system, monetary policy, financial and economic crisis.*

This article examines the RA banking system and the problems it faces, as well as the possibilities of their solution and development trends. The article studies the evolution of the banking system in the Republic of Armenia over the past thirty years, pinpointing the factors that have disrupted its sustainable development. Special focus within the article was placed on two critical periods: the global financial and economic crisis of 2007-2009 and the challenges stemming from the COVID-19 pandemic in 2020-2021.

The purpose of the study of the article is to study the problems faced by the RA banking system in the current geopolitical and economic conditions and to develop effective mechanisms for combating new challenges. Empirical (observation, measurement, comparison), statistical data collection and analysis methods of economic research were implemented to collect and analyze the necessary information within the framework of the topic studied in the article, through which the collected information was subjected to appropriate analysis.

ԹԵՐԵԶԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ*Տնտեսագիտություն, բակալավրիատ,
3-րդ կուրս***ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԴՈՐՏՖԵԼԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍԿԱՅԻՆ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ****Հիմնաբառեր.** *վարկերի կառուցվածք, վարկեր/ՀՆԱ, արտարժութւթային ավանդներ, սպառողական և հիպոթեքային վարկեր, էմպիրիկ գնահատում*

ՀՀ-ում երկարաժամկետ, կայուն, ներառական տնտեսական աճին ուղղված մակրոտնտեսական քաղաքականության իրականացումն ուղեկցվում է առևտրային բանկերի վարկային և ավանդային պորտֆելների կառուցվածքի նշանակալի փոփոխություններով, որոնց մի մասը մակրոտնտեսական և ֆինանսական կայունության տեսանկյունից որոշակի ռիսկեր է պարունակում: Թեև այսօր սպառողական և հիպոթեքային վարկերի տեսակարար կշռի ավելացումը բիզնեսին տրամադրվող վարկերի նկատմամբ խթանում է տնտեսական աճը, սակայն երկարաժամկետ տնտեսական աճի համար առավել կարևոր են համակարգաստեղծ ոլորտներին և բիզնես հարվածին տրամադրվող վարկերը: Միևնույն ժամանակ, տնային տնտեսություններն ավելի շատ միջոցներ են հատկացնում վարկերի սպասարկմանը, ինչը ևս, կրճատելով ընթացիկ խնայողությունները, ապագայում ներդրումներ կատարելու համար ռիսկեր է ստեղծում: